Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 597/1
վարչական տույժ նշանակելու մասին

«17» մայիսի 2021թ. ք. Երևան

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի Արարատյան մաքսատուն-վարչության պետ Կարեն Բաբայանս, քննելով «Բարսիս» ՍՊ ընկերության (ՀՎՀՀ՝ 02230504, հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Արշակունյաց թիվ 57/2) լիազոր անձ Վահան Ջանոյանի (նույն. քարտ՝ 008143117) նկատմամբ հարուցված մաքսային կանոնների խախտման վերաբերյալ գործը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

«Բարսիս» ՍՊ ընկերության անվամբ թիվ 05100010/140521/0027040 ապրանքների հայտարարագրով ընկերության լիազոր անձ Վահան Ջանոյանի կողմից «Ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով հայտարարագրվել են ապրանքներ: Հայտարարագրով ընտրված է մաքսային հսկողության «Կարմիր ուղի» ընթացակարգը:

Արարատյան մաքսատուն–վարչության փաստաթղթային հսկողության բաժնի կողմից իրականացվել է թիվ 05100010/140521/0027040 ապրանքների հայտարարագրի փաստաթղթային հսկողություն, ինչի արդյունքում բացահայտվել է, որ հայտարարագրի 41-րդ սյունակում սխալ է լրացվել լրացուիչ միավորը: Հսկողության արդյունքում 15.05.2021 թվականին առաջադրվել է պահանջ ապրանքների հայտարարագրում հայտարարագրված տեղեկություններում փոփոխություններ (լրացումներ) կատարելու մասին:

Նշված դեպքով Արարատյան մաքսատուն–վարչության փաստաթղթային հսկողության բաժնի ավագ մաքսային տեսուչի կողմից 15.05.2021թ.-ին Վահան Ջանոյանի նկատմամբ կազմվել է մաքսային կանոնների խախտման վերաբերյալ արձանագրություն՝ ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածի հատկանիշներով, թիվ 05100010/140521/0027040 ապրանքների հայտարարագրի 41-րդ սյունակի վերաբերյալ ոչ ճշգրիտ տեղեկություններով հայտարարագրելու համար:

Մաքսային կանոնների խախտման վերաբերյալ գործի քննությունը նշանակվել է 17.05.2021թ. ժամը 16:00-ին, ինչի անցկացման վայրի և ժամանակի մասին ծանուցումն առձեռն հանձնվել է Վահան Ջանոյանին: Գործի քննության ընթացքում վերջինս առարկություններ չի ներկայացրել:

Նյութերի ուսումնասիրությունից պարզվել է, որ «Բարսիս» ՍՊ ընկերության լիազոր անձ Վահան Ջանոյանի կողմից թիվ 05100010/140521/0027040 ապրանքների հայտարարագրով «Ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ընկերության անվամբ հայտարարագրվել է բեռ, սակայն հայտարարագրի 41-րդ սյունակը լրացուցիչ միավորը 7141,5 քմ-ի փոխարեն լրացվել է՝ 71415 քմ, այսինքն՝ հայտարարագիրը ներկայացրել է ոչ ճշգրիտ տեղեկություններով:

Նշված հայտարարագրում ոչ ճշգրիտ տեղեկություններ ներկայացնելը չի առաջացրել մաքսային վճարների պակաս հաշվարկում կամ չհաշվարկում (հիմք՝ զեկուցագիր թիվ Ն/20-1/84325-2021 առ 15.05.2021թ.):

ԵԱՏՄ Մաքսային Միության Հանձնաժողովի 20.05.2010թ-ի թիվ 257 որոշմամբ հաստատված՝ ապրանքների մաքսային հայտարարագրի լրացման կարգի 14-րդ կետով սահմանված են ներմուծված ապրանքների հայտարարագրման դեպքում ապրանքների հայտարարագրում հայտարարատուի կողմից լրացման ենթակա սյունակները, որոնց մեջ ներառված է նաև 41-րդ սյունակը:

ՀՀ մաքսային օրենսգրքի 189-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մաքսային կանոնների խախտում է համարվում անձի կողմից կատարված անօրինական

գործողությունը կամ անգործությունը, որն ուղղված է Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսդրությամբ և մաքսային ոլորտին առնչվող Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների և տրանսպորտային միջոցների մաքսային հսկողության և մաքսային ձևակերպման սահմանված կարգի դեմ, և որի համար սույն օրենսգրքով նախատեսված է պատասխանատվություն:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ֆիզիկական և պաշտոնատար անձինք մաքսային կանոնները դիտավորյալ կամ անզգուշորեն խախտելու համար ենթակա են պատասխանատվության:

ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքները և տրանսպորտային միջոցները չհայտարարագրելը կամ ոչ իրենց անվանմամբ հայտարարագրելը կամ հայտարարագրման ժամանակ ոչ ճշգրիտ տեղեկություններ նշելը՝ որի արդյունքում չի առաջանում մաքսային վճարների (բացառությամբ մաքսավճարի) պակաս հաշվարկում կամ չհաշվարկում, ինչպես նաև ոչ սակագնային կարգավորման միջոցների չկիրառում՝ հանցագործության հատկանիշների բացակայության դեպքում՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ 50 հազար դրամի չափով:

Այսպիսով, «Բարսիս» ՍՊ ընկերության լիազոր անձ Վահան Ջանոյանը թույլ է տվել ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված մաքսային կանոնների խախտում՝ հայտարարագրման ժամանակ ոչ ճշգրիտ տեղեկություններ նշելով, որի հետևանքով չի առաջացել մաքսային վճարների պակաս հաշվարկում կամ չհաշվարկում, ինչպես նաև ոչ սակագնային կարգավորման միջոցների չկիրառում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ մաքսային օրենսգրքի 221-րդ, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 214-րդ և 234-րդ հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված մաքսային կանոնների խախտում կատարելու համար «Բարսիս» ՍՊ ընկերության լիազոր անձ Վահան Ջանոյանին ենթարկել վարչական պատասխանատվության՝ տուգանելով **50,000** ՀՀ դրամի չափով:

2. Որոշման մասին հայտնել «Բարսիս» ՍՊ ընկերության լիազոր անձ Վահան Ջանոյանին՝ պարզաբանելով, որ ՀՀ մաքսային օրենսգրքի 221-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն որոշումն ուժի մեջ է մտնում այն կայացնելու պահից և համաձայն նույն օրենսգրքի 222-րդ հոդվածի 2-րդ մասի՝ որոշումը կարող է բողոքարկվել վերադաս մաքսային մարմին (պաշտոնատար անձին) կայացնելուց հետո 10 օրվա ընթացքում կամ ՀՀ վարչական դատարան՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ երկամսյա ժամկետում:

3. Որոշմամբ նշանակված տուգանքի վճարման հաշվեհամարն է **900005024055-ը (ՀՀ պետական բյուջե, կենտրոնական գանձապետարան, Արարատյան մաքսատուն-վարչություն, ԿՈԴ 27):**

ԱՐԱՐԱՏՅԱՆ ՄԱՔՍԱՏՈՒՆ-ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ **Կ. ԲԱԲԱՅԱՆ**